*Ջրամատակարարում և ջրահեռացում*

Կատարվել է Երևանի Ավան վարչական շրջանի Մշակույթի տան շենքի սանհանգույցերի տեղազննում, որի հետևանքով պարզվել է, որ.

ա. Մշակույթի տանը գոյություն ունեն թվով 1 սանհանգույց և խոհանոց,

բ. սանհանգույցը մասնակի վերանորոգված է,

գ. գործող լվացարակոնքը և 2 զուգարանակոնքերը ենթակա են փոխարինման, և անհրաժեշտություն կան նս 1 լվացարանակոնքի և 1 զուգարանակոնքի ավելացման

դ. խողովակները փոխարինված են պլաստիկ խողովակներով,

ե. Մշակույթի տան կոյուղագիծը միանում է բակում գտնվող կոյուղու հորերին, որը գտնվում է նորմալ վիճակում:

Վերանորոգման ծրագրի շրջանակներում ներառված են հետևյալ աշխատանքները.

ա. սանհանգույցում սանիտարական սարքերի և փականների տեղադրում,

բ. խոհանոցում լվացարանակոնքի տեղադրում,

գ. ջրահեռացման խողովակների փոխարինում միայն 1-ին և 2-րդ հարկերի սահմաններում:

ե. Նախատեսվում է փոխարինել սանհանգույցի ջրամատակարարման խողովակները:

Ստորև բերված են սանհանգույցում և խոհանոցում կատարվող աշխատանքները՝

1. ԽՈՀԱՆՈՑ
- թվով 1 պահարանով երկտեղ խոհանոցային լվացարանակոնքի մոնտաժում

2. ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑ
- թվով 3 զուգարանակոնքի մոնտաժում,
- թվով 2 լվացարանակոնքի մոնտաժում,